ՄԵԾ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՀԵՂ ՑԱՍՈՒՄԸ

որհրդային Միության աշխատա-
րական մասսաների ահեղ դատա-
նի առջևից անցնում են հերթով
ուգահեռ կենտրոնի» տրոցկիստա
իկաները, սրիկաներ, վորոնց ա-
րքներն ըստ արժանվույն նշավա-
րու համար անզոր է մարդկային
զուն:

Պյատակով... Ռադեկ... Սոկոլ-
նիկով... Սերեբրյակով... Մուրա-
լով... Դրոբնիս... և այլն: Այս ա-
ններից յուրաքանչյուրը համար
լրտեսության, դիվերսիաների,
թյան, մարդասպանու-
ունների, Հայրենիքի դավաճանու-
յան:

արդկային կերպարանքը կորցրած
բանդիտները, տրոցկիստական
ուգահեռ կենտրոնի» նողկալի տե-
րիստներն ու լրտեսները ցինիկա-
ր խոստովանում են իրենց վոճ-
ագործությունները, վորոնց նմա-
պատմությունը չգիտե: Մահա-
րձեր կուսակցության ու կառա-
արության ղեկավարների կյանքի
մ, հանքահորերի պայթեցում,
անվորների սպանություն, գնացք-
րի խորտակում, վնասարարու-
յունների կազմակերպված սիստեմ,
ատերազմի արագացում, լրտեսու-
յուն Ֆաշիստական պետություննե-
ի ոգտին, Հայրենիքի վաճառք—
հա թե ինչպիսի սև գործունեու-
յուն եյին ծավալել յերեցս անարգ
րոցկիստական սրիկաները հուդա-
րոցկու ցուցմունքներով ու անմի-
ական դիրեկտիվներով:

Զազրելի ու հրեշավոր է նրանց
եմքը: Նրանց ձեռքերը ներկված են
եղափոխության բոցավառ տրիբունի
երգեյ Միրոնովիչ Կիրովի ազնիվ
րյունով, նրանց ժանիքներից կա-
թում է մեծ Հայրենիքի անձնուրաց
ավակների՝ բանվորների ու կոլ-
եր բանակայինների թանձրացած
րյունը:

— Վորքան ավելի շատ արյուն,
թյուններ, այնքան ավելի
վ,— այս է յեղել հակահեղափո-
ական տրոցկիստ-բանդիտների նը-
նաբանը:

Անզոր կատաղությամբ համակված
եպի սոցիալիզմի յերկրի համա-
արհային պատմական հաղթանակ-
երը, դեպի կոմունիստական հասա-
ակարգի կառուցման վեհ գործը,
րանք ճիգ ու ջանք չեյին խնայում
ասեցնելու համար Խորհրդային
իության հզոր առաջխաղացումը,
ժերը ներածին չափ վնասելու
որհրդային Միությանը: Նրանք
նում եյին այն ամենը, ինչ վոր
արող եյին՝ տապալելու համար
որհուրդների իշխանությունը, ճա-
ապարհ հարթելու կապիտալիզմի
ստավրացիայի համար, արյան
վի մեջ խեղդելու սոցիալիզմ կա-
ուցողներին՝ բանվորներին, կոլտն-
եսային գյուղացիությանը, խորհր-
ային ինտելիգենցիային: Նրանք
ամարձակվել եյին տեռորիստական
կտ պատրաստել հեղափոխության
[illegible] ընկեր Ստալինի դեմ, ժո-
վուրդների հանճարեղ առաջնորդի
եմ, վորի իմաստուն ղեկավարու-
յամբ բերկրալի ու յերջանիկ կյան-
ուղիով առաջ են ընթանում ստա-
ինյան անխախտ բարեկամությամբ
ղկապված Խորհրդային Միության
զմազգ ժողովուրդները:

Տրոցկիստ դահիճները մահա-
րձ եյին նախապատրաստում
ւսակցության ու կառավարության
րելի ղեկավարների՝ Մոլոտովի,
րոշիլովի, Կագանովիչի, Որջոնի-
ձեյի, Կոսիորի, Պոստիշևի, Բե-
այի դեմ:

Դատավարության ընթացքում ա-
լի ու ավելի է մերկացվում տը-
ցկիստների՝ ֆաշիզմի այդ ուղ-
ակի գործակալության նողկալի,
վերի դեմքը:

Ժողովուրդների թշնամիների հան-
պ լեռնանում է աշխատավորու-
յան զայրույթը:

Բորբոքվում է անսահման ատե-
ւթյան սրբազան կրակը: Խորհր-
ային Միության ամբողջ յերկրով
կ՝ Մինսկից մինչև Վլադիվոս-
ոկ, Արխանգելսկից մինչև Յերե-
ան, ամենուրեք ահարկու ալիքնե-
ով ծփում է ժողովրդական ցասու-
ը, հնչում է Խորհրդային Միության ազատ ու յերջանիկ աշխատավորության ահեղ ձայնը:

Բանվորներն ու կոլտնտեսականները, գիտնականներն ու արվեստագետները, բոլոր աշխատավորները —հասակավոր թե յերիտասարդ— խորհրդային դատարանից միահամուռ կերպով պահանջում են բնաջինջ անել կատաղած տրոցկիստական բանդան, ժողովրդի յերդվյալ թշնամիներին, վորոնք վոչ մի միջոցից չեն խորշել իրենց աշխատանքում:

Ահա թե ինչ են գրում Գորլովյան ազոտային պարարտանյութերի գործարանի բանվորները, վորտեղ իր վընասարար աշխատանքն եր ծավալել գերմանական լրտես տրոցկիստ Ռատայչակը:

«Մենք խնդրում ենք ԽՍՀՄ-ի դատախազ ընկեր Վիշինսկուն՝ դատարանում մեր ամբողջ յերկրի առջև կարդալ գործարանի այն լավագույն մարդկանց անունները, վորոնք ընկան տրոցկիստ - դիվերսանտների ձեռքով: Թող ամբողջ աշխարհը գիտենա, թե ում են սպանել այդ սրիկաները: Ահա զոհերի ցուցակը՝ Իվան Յեգորովիչ Լուրյեվ— ստախանովական, ծնված 1902 թվականին, Վլադիմիր Անդրեյեվիչ Բուդին— տաղանդավոր ինժեներ, ծնված 1913 թըվականին, Յեվգենի Ֆեոդորովիչ Կուրկին— կոմյերիտական, ստախանովական— ծնված 1916 թվականին, Իրինա Յեգորովնա Սորեյնիկովա— հարվածային, ծնված 1913 թվականին, Նիկոլայ Իվանովիչ Մոսկյեց— հարվածային, ծնված 1913 թվականին: Այս ընկերներն սպանվեցին: Վիրավորվեցին 10 հոգուց ավելի»:

Խորհրդային Հայաստանի աշխատավորությունը վողջ Խորհրդային Միության աշխատավորության հետ միասին անզուսպ ցասումով ներկայացնում է նույն պահանջը:

— Իրենց տերերի՝ գերմանական ֆաշիզմի ու հուդա Տրոցկու թելադրանքով նրանք տեռոր են կազմակերպել մեր ղեկավարների դեմ, ցանկացել են մեր յերկիրը բաժանել գերմանական ու ճապոնական իմպերիալիստների միջև, խորհրդային ազատ ու յերջանիկ ժողովուրդը դարձնել կապիտալիզմի ստրուկ: Այդ ճիվաղները պետք է վոչնչացվեն, բնաջինջ արվեն յերկրի յերեսից:

Խորհրդային Հայաստանի աշխատավորական մասսաները պահանջում են խորհրդային որենքների ամբողջ խստությամբ դաժան դատաստան տեսնել նաև հակահեղափոխական դաշնակ-նացիոնալիստական սրիկաների նկատմամբ, վորոնք սերտորեն կապվելով տրոցկիստների հետ, հրեշավոր դավեր եյին նյութել մեր կուսակցության, մեր առաջնորդների, մեր յերկրի ու խորհրդային ազատ ժողովուրդների դեմ:

Ի պատասխան անարգ տրոցկիստների զզվելի արարքների, Հայաստանի աշխատավորական մասսաներն իրենց նախաձեռնությամբ բազմապատկում են խորհրդային հպարտ բազեների բանակը, առաջադրելով՝ «Մեր պատասխանը կապիտալիզմի ռեստավրատորներին» եսկադրիլյայի կառուցման պահանջը:

Մեծ է ու հզոր ժողովրդի ցասումը: Աշխատավորական մասսաները պահանջում են խստորեն պատասխանատվության յենթարկել նաև այն վիժվածքներին, վորոնց հակահեղափոխական գործունեությունն իր զարշելի ստորությամբ բացահայտվեց դատավարության ընթացքում:

Ժողովրդի թշնամիները նորից սխալվեցին իրենց հաշիվների մեջ: Չկա այնպիսի ուժ, վոր կարողանա դիմադրել խորհուրդների յերկրի հըզոր առաջխաղացմանը: Խորհուրդների յերկրի յերեսից կորչի տրոցկիստական պղծությունը:

Աշխատավորական մասսաները, ել ավելի համախմբվելով մեր պանծալի Կոմունիստական կուսակցության և ժողովուրդների սիրելի առաջնորդ պողպատե Ստալինի շուրջը, բնաջինջ անելով ժողովրդի ստորագույն թըշնամիներին, ել ավելի ամրապնդելով սոցիալիզմի յերկրի պաշտպանունակությունը, առաջ կընթանան դեպի նոր, մեծագույն հաղթանակներ կոմունիզմի համար մղվող մարտերում: